ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 12 » մայիսի 2015 թ. N 122-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԵՐՆՋԱՏԱՓ, ՇՈՂԱԿՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳՅՈՒՂ, ԱՐԶԱԿԱՆ, ԲՈՒԺԱԿԱՆ, ԹԵՂԵՆԻԿ, ՆՈՐ ԳԵՂԻ ԵՎ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՕԿՆՈԳԻՆԱ ՎՆԱՍԱՏՈՒԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի մայիսի 11-ի N 043 գրությունով ներկայացված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի և Կոտայքի մարզերի տարածքում կատարված մոնիտորինգի արդյունքները՝ օկնոգինա վնասատուի դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել 2015 թվականին օկնոգինա վնասատուի դեմ քիմիական պայքար իրականացնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Երնջատափ, Շողակն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արագյուղ, Արզական, Բուժական, Թեղենիկ, Նոր Գեղի և Սարալանջ համայնքներին անհատույց հատկացվող «Կռալ» բույսերի պաշտպանության միջոցի (այսուհետ՝ բույսերի պաշտպանության միջոց) չափաքանակները՝ համաձայն հավելվածի:

2. «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Ավագյանին՝

1) ապահովել բույսերի պաշտպանության միջոցի անհատույց հանձնումը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Երնջատափ, Շողակն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արագյուղ, Արզական, Բուժական, Թեղենիկ, Նոր Գեղի և Սարալանջ համայնքների ղեկավարներին կամ վերջիններիս կողմից լիազորված անձանց՝ սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի համաձայն.

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել հաշվետվություն օգտագործված բույսերի պաշտպանության միջոցի քանակության վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ս. Գալստյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
գուղատնտեսության նախարարի
2015 թվականի մայիսի 12 -ի N 122 -Ա հրամանի

2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՕԿՆՈԳԻՆԱ ՎՆԱՍԱՏՈՒԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԵՐՆՋԱՏԱՓ, ՇՈՂԱԿՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳՅՈՒՂ, ԱՐԶԱԿԱՆ, ԲՈՒԺԱԿԱՆ, ԹԵՂԵՆԻԿ, ՆՈՐ ԳԵՂԻ ԵՎ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՎՈՂ «ԿՌԱԼ» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

Մարզը, համայնքը	Բույսերի պաշտպանության միջոցի քանակը, լիտր	Աշխատանքի ծավալը, հեկտար
Արագածոտնի		
Երնջատափ	15	62.5
Շողակն	7	29.16
Կոտայքի		
Արագյուղ	15	62.5
Արզական	10	41.66
Բուժական	10	41.66
Թեղենիկ	10	41.66
Նոր-Գեղի	15	62.5
Սարալանջ	15	62.5
Ընդամենը	97	404.14

Գ. Բաղիյան

Ս. Գալստյան

Ա. Կիրակոսյան

Ա. Հարությունյան

Կ. Ավետիսյան

Մ. Հովակիմյան

Ա. Ավետիսյան